

**Նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանի ելույթը՝ ֆրանկաֆոնյան «Երիտասարդություն, միասին ապրելու սկզբունքը» խորագրով միջոցառումների շրջանակներում անցկացվող «Ազատ՝ միասին» նախաձեռնության պաշտոնական մեկնարկի արարողությանը**

Հարգելի՛ ներկաներ, հյուրեր՛ր, ողջունում եմ ձեզ «Երիտասարդություն, միասին ապրելու սկզբունքը» խորագրով միջոցառումների շրջանակներում անցկացվող «Ազատ՝ միասին» նախաձեռնության պաշտոնական մեկնարկի արարողությանը:

Ֆրանկաֆոնիայի գազաթափողվի շրջանակներում այսօր նախատեսված միջոցառումներից սա, թերևս, ամենաերիտասարդականն է, քանի որ միասնական այս հարթակում իրենց գաղափարները, գործարար ձեռքբերումներն ու հնարավորություններն են համատեղ ներկայացնում բազմաթիվ երիտասարդ գործարարներ Հայաստանից և ֆրանկաֆոն այլ երկրներից:

Վստահ եմ, որ այս նախաձեռնությունը հնարավորություն կտա տարբեր երկրներ ներկայացնող երիտասարդներին համագործակցության համատեղ հետաքրքիր և հեռանկարային ծրագրեր ձևավորել:

Գազաթափողվի շրջանակներում կարևոր միջոցառումներից մեկում (Ֆրանկաֆոնիայի ավանում, որտեղ տեղի են ունենալու բազմաժանր միջոցառումներ) այսօր հյուրընկալվել են երիտասարդ գործարարները: Լիահույս եմ, որ այստեղ ֆրանկաֆոն ընտանիքի անդամ երիտասարդներին տրամադրված տաղավարներում տեղ են գտել նրանց կողմից իրականացված և կյանքի կոչված հետաքրքիր ու համարձակ բազում գաղափարներ:

Հարգելի՛ ներկաներ, կրկին ողջունում եմ բոլորիդ և մեր հյուրերին ասում. «Բարի գալուստ Հայաստան, բարի գալուստ բիբլիական երկիր»: